Տ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Յուրաքանչյուր անձնանուն և մասնավորապես ազգանուն բառ է, ուստի կարող է ենթարկվել բառակազմական քննության:

Լեզվական միավորի բառակազմական քննության համար ընտրում ենք ձևույթային վերլուծության եղանակը, որը կիրառվել է մեր կողմից ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը ուսումնասիրելիս[1]:

Հայտնի է բառի կառուցվածքի ուսումնասիրության երկու ուղի՝ բառակազմական և ձևույթաբանական: Առաջինի նպատակն է վեր հանել տվյալ լեզվի զարգացման որևէ փուլում գործող բառակազմական կաղապարները: Այսպես, հայկական ազգանվան բառակազմական քննությունը հանգեցնում է ազգանվանակերտ հիմք + ազգանվանակերտ ածանց կաղապարին:

Մյուս ուղին բառի ձևույթային վերլուծությունն է, որի արդյունքը հանգում է նվազագույն իմաստակիր միավորների ձևույթների վերհանմանը: Այստեղ հետագա քննության հեռանկարները նկատելիորեն մեծանում են, քանի որ հնարավորություն է ստեղծվում, ի թիվս այլ խնդիրների, նկարագրել նաև ձևույթների զուգորդումը: Ձևույթային վերլուծությունը չի բացառում բառակազմականը, քանի որ ձևույթաբանորեն վերլուծվում է վերը ներկայացված բառակազմական կաղապարը: Այս դեպքում մեծակաղապարի սահմաններում վեր են հանվում հնարավոր մանրակաղապարներ: Այսպես, Աշուղ-աթոյան, Արծաթագործյան, Խաղաղորդյան, Միրզաթունյան, Պետրոսյան ազգանունները, ինչպես նաև հայկական մյուս բոլոր ազգանունները հանգում են վերը հիշատակված բառակազմական կաղապարին՝ ազգանվանական հիմք + ածանց, մինչդեռ հիմքերը, մասնավորապես բերված օրինակների, ներկայանում են իբրև մանրակաղապարներ՝ /Աշուղ-աթ/-ո/+յան, /Արծաթա-գործ/+յան, / Խաղաղ-որդ/+յան, /Միրզա-թուն/-ի//+յան, Պետրոս+յան: Ընդորում մանրակաղապարի սահմաններում ձևույթների կազմն ու փոխհարաբերությունը տվյալ օրինակներում չեն կրկնվում՝ Աշուղաթոյան-ուղեկցող բառ+անձնանվան կոչական տարբերակ + /-յան/, Արծաթագործյան-գործ ածանցակերտով «գործող անձ» նշանակությամբ բառ + /-յան/, Միրզաթունյան – ուղեկցող բառ + անձնանվան բարբառային տարբերակ + /-յան/, Պետրոսյան - անձնանուն + /-յան/: Ձևույթային վերլուծության դեպքում հայկական ավելի քան 15 հազար ազգանունները կարելի է հանգեցնել սահմանափակ քանակով հիմքատիպերի:

Թվարկված առանձնահատկությունները, որ բնութագրում էին բառակազմությունը և ձևույթային վերլուծությունը, համակարգի ու նորմայի միջև եղած երևույթներ են: Այսպես, համակարգը սահմանում է, որ հայկական ազգանունը կազմվում է բառին /ազգանվանական հիմքին/ ավելացնելով ազգանվանակերտ ածանց: Այսքանով համակարգի սահմաններն ավարտվում են: Նրա ընձեռած հնարավորությունները

նորման կարող է յուրովի տնօրինել: Այս դեպքում առկա են ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գործոններ: Այսպես, հայտնի է, որ անձնանունը ազգանվանակերտ ընդհանրական հիմք է: Այս երևույթը տիպաբանական ընդհանրություն է, որը հայերենում կարող է տարբեր դրսևորումներ ունենալ: Այսպես, Ալբերտ անձնանվան գործածությունը մեզանում սկսվել է մի քանի տասնամյակ առաջ, իսկ Բաբկեն անձնանվան առաջին վկայությունները կապվում են II-III դդ. հետ: Սակայն մեր ազգանուններում Ալբերտյան ազգանուն կա, իսկ Բաբկենյան ոչ: Այսպես տեղանվանական հիմքերով ազգանունները հայերենում կազմվում են հետևյալ կաղապարով՝ տեղանուն + /-ցի/ + ազգանվանակերտ ածանց Սևանցյան, սակայն ինչպես ցույց են տալիս փաստերը, XIX դ. 70-80-ական թթ. տեղանվանական -ցի ածանցը հաճախ ընկնում էր՝ Երևանյան, Ալաշկերտյան, Թիֆլիսյան: Առաջադրված խնդիրների լուծումը պահանջում է մի դեպքում /Ալբերտյան - Բաբկենյան/ արտալեզվական գործոնների վերհանում, մյուս դեպքում զուտ լեզվաբանական /հնչյունաբանական/:

Հայկական ազգանվան ձևույթային վերլուծությունը սկսում ենք աջից բառի վերջից: Օգտվելով երկատման աշխատանքային մեթոդից՝ հատկությավորման առաջին քայլում ստանում ենք -յան, -յանց, -ունի, -ենց, -ունց, -անց ձևակները, որոնք խմբավորվում են «ազգանվանակերտ ածանց» ձևույթի մեջ: Սրան հակադրվող հատվածը, որ կոչում ենք «ազգանվանական հիմք», աջից հետևողական երկատման դեպքում կարող է տալ հետևյալ կարգի ձևակներ

ա) Անձնանուն, որ միավորվում է «անձնանվան ամփոփ կամ բառարանային դրսևորում» ձևույթի մեջ Աբրահամ, Գրիգոր, Գևորգ, Դանիել: Այս կարգի միավորները ձևույթային վերլուծության տեսակետից սահմանային են:

բ) -ենց, -ունց, -ինց, -ունի. Մալ-ենց-յան, Վարդ- ունց-յան, Մակ- ինց- յան, Մանդակ-ունի/ի/-յան: Առանձնացված ձևակները միավորվում են «տոհմանվանական ածանց» ձևույթի մեջ: Ազգանվանակերտ և տոհմանվանակերտ ձևույթների փոխհարաբերությանն անդրադառնալիս անհրաժեշտ է նշել, որ այս դեպքում ազգանունն անվանակազմական երկրորդ քայլի արդյունք է:

գ) Տեղանուն, որ միավորվում է «տեղանվան անփոփոխ կամ բառարանային դրսևորում» ձևույթի մեջ և ինչպես ա) կետում նշված դեպքերում, սահմանային է Մանանդ-յան, Շարուր-յան, Տարոն-յան:

դ) -գործ, -իչ, -արար, -որդ, -ճի, /-ջի, -չի/. Արծաթա-գործ-յան, Սափր-իչ-յան, Արծ-արար-յան, Խաղաղ-որդ-յան, Ղոնդուրմա-ջ/ի/-յան: Առանձնացված ածանցները միավորվում են «գործող անձ» . «արհեստավոր» իմաստով ձևույթի մեջ

ե) –ց/ի/, -չ/ի/. Շատախ-ց-յան, Սվազ-չ-յան: Միավորվում են « տեղանվանակերտ ածանց» ձևույթի մեջ, որին նախորդող հատվածն առանց բացառության տեղանուն է:

զ) –ո, -ե. Բար-ո-յան, Գար-ե-յան – միավորվում է «անձնանվան կոչական ձև սերող ածանց» ձևույթի մեջ:

է) –իկ, -ուլ. Ազատ-իկ-յան, Գար-ուշ-յան, Սաք-ուլ-յան: Առկա է «անձնանվան փաղաքշական տարբերակ սերող ածանց» ձևույթը:

ը) Ազգանվանական ածանցին կարող են անմիջապես նախորդել այնպիսի բա-

ղադրիչներ, որոնց առկայությունը պայմանավորված է բառակազմական երրորդ քայլի արդյունքում ստացված հատվածների բովանդակությամբ:

Խոսքը վերաբերում է -խան, -բեկ, -միրզա, -բաշի, -զադե, ինչպես նաև -ջան, -գյուլ, -օղլ/Խ/-ում բաղադրիչներին Ազատ-խան-յան, Ամիր-խան-յան, Մուրադ-բեկ-յան և Աղա-բեկ-յան, Աղա/միրզ/-յան, Իգիթ-բաշ-յան, Հեքիմ-բաշ-յան:

Ելնելով վերը շարադրվածից իբրև ձևույթային վերլուծության ելակետ ընտրվել է գծային հատույթավորման սկզբունքը:

Նման մոտեցման դեպքում առանձնանում են արմատական և բառակազմական ձևակներ:

Բառակազմական ձևակները միօրինակ չեն: Այստեղ առաջին հերթին տարբերում ենք սահմանային միավորները ազգանվանակերտ ածանցները: Առանձին խումբ են կազմում անձնանվանական մյուս ածանցները -ո, -ե, -իկ, -ուշ, -ունի: Սահմանազատվում են նաև զուտ բառակազմական ածանցները՝ -արար, -ավոր, -ի, -ուստ, -ակ և այլն: Հենվելով ձևույթաբանական վերլուծության վերը շարադրված սկզբունքի վրա՝ կատարենք ձևակների գործառական դասակարգումը:

$Ա_1$ – ուղղական հոլով ոչ բաղադրյալ անձնանուն և տեղանուն անփոփոխակներ՝ Արշակ-յան, Մարիամ-յան, Սասուն-յան, Ջահուկ-յան,

$Ա_2$ - ուղղական հոլով ոչ բաղադրյալ հասարակ անուններ, որոնք վկայված են բառարաններում՝ Հովիվ-յան, Դարբին-յան, Պարոն-յան, Եպիսկոպոս-յան,

$Ա_3$ - ազատ /անկախ/ ձևափոխված հիմք , որը կարող է հանգել $Ա_1$ և $Ա_2$-ին Գզրյան /գզիր/, Գրիգ-յան /Գրիգոր/, Դավթ-յան /Դավիթ/,

$Ա_4$ – կապված /կախյալ/ հիմք, որ կարող է գործառել միայն որևէ ձևույթի Ա,ա-ի հետ զուգորդության դեպքում Ակ-ունց-յան, Մալ-ենց-յան, Սակ-ինց-յան, Սմատ-ուն/Խ/-յան, Աֆ-յան, Դա-յան, Հուս-յան, Ըղձ-ակ-յան:

$Ա_5$ - անձնանվան կոչական տարբերակի հիմքեր: Հանդես են գալիս –ո, -ե, -ի կոչականակերտ ածանցների զուգորդությամբ: Հաճախ նույնանում են $Ա_4$-ի հետ. սակայն դրսևորվում են նաև իբրև $Ա_1$-ի «առաջին փակ վանկ» Բար-ո-յան /Բարուկակ, Բարեղամ/, Գար-ե-յան /Գարեգին/, Աս-ո-յան /Աստվածատուր, Ասատուր/, Թուն-ի-յան /Հարություն/,

$Ա_6$ - անձնանվան լիաղաքշական տարբերակի հիմքեր: Հանդես են գալիս –ի, -ուշ, -ուլ ածանցների զուգորդությամբ: Այս հիմքը կարող է համընկնել $Ա_4$ – ի /Ազատ-իկ-յան, Դանիել-իկ-յան/ և $Ա_4$ – ի /Բաղդ-իկ յան, Գար-ուշ-յան, Սաք-ուլ-յան/ հետ:

ա - սահմանային ազգանվանակերտ ածանց: Առկա է բոլոր կառուցատիպերում, բացառությամբ $Ա_1$ և $Ա_1$ $ա_1$ – ի: Այն աջից հատույթավորվող առաջին ձևույթն է: Այս շարքին են դասվում՝ -յան, -յանց –ունի, -ական, -ունց, -ոնց, -անց, -ունք /Սար-ունք/ ածանցները:

$ա_1$ – ձևույթներ, որոնք եռակի բնույթ ունեն, կարող են հանդես գալ.

1. զուգորդման որևէ անձնանվան հետ՝ Ամնաս-բեկ-յան, Բեկ-մուրադ-յան, Պարոն-Վարդյան, Վարդպարոնյան, Աելիք-Ավետիսյան, Տեր-Պետրոսյան,

2. ինքնուրույն՝ Բեկյան, Պարոնյան, Մելիքյան, Տերյան,

3. միմյանց զուգորդմամբ՝ Մելիքբեկյան, Միրզաջանյան, Սմիրզաոյան, Հաջիբեկյան, Աղաջանյան: Վերջիններիս առանձնահատկություններից մեկն այն է, որ մասնավոր դեպքերում կարող են հանդես գալ իբրև ինքնուրույն անձնանուններ, հետևաբար անձնանուն-ազգանվանակերտ հիմքեր.

$ա_2$ – ձևույթներ, որոնք իբրև ածանց հանդես են գալիս հայերենի հասարակ անուններում՝ -իկ, -ակ, -ուկ, -արար, -ում, -ական, -ավոր, -ան, -ուստ, -իչ, -ուն: Այս կարգի ձևույթներն օրինաչափորեն զուգորդվում են $Ա_2$, $Ա_3$ տիպի հիմքերի հետ, իսկ երբ $ա_2$ –ը ան-նախածանցն է, ապա նաև $Ա_4$ -ի հետ:

$ա_3$ – անձնանվան /հիմքի/ փաղաքշական տարբերակ կերտող ածանցներ՝ -իկ, -ուշ, -ուլ:

$ա_4$ – անձնանվան /հիմքի/ կոչական տարբերակ կերտող ածանցներ՝ -ո, -ե,

$ա_5$ – այլ մարդանուններ կերտող այնպիսի ածանցներ, որոնք հանդես են գալիս ա-ից առաջ Բագրատ-ուն/ի/-յան, Մալ-ունց-յան, Պապով-յան, Խաչ-ենց-յան:

Ասվածների հիման վրա կազմվել է մի աղյուսակ, ուր ներկայացված են հայկական ազգանունների կառուցատիպերը համաժամանակյա կտրվածքով:

Օգտվելով աղյուսակի ընձեռած հնարավորություններից՝ ներկայացնենք հայկական ազգանունների բացարձակ մեծամասնությանը հատուկ տարրը՝ ազգանվանակերտ ածանցը:

1	2	3
1	Ա$_1$	Աբով, Քաչանթար, Քեչեկ, Թոչար
2	Ա$_1$ա$_1$	Դանիել-բեկ
3	Ա$_1$ա	Աբգարյան, Սանուկյան, Սիմոնյան, Արտամետյան, Երզնկյան, Երևանյան, Կարինյան
4	Ա$_2$ա	Բռուտյան, Դարբինյան, Եպիսկոպոսյան, Երեցյան, Հովիվյան, Պարոնյան, Վարպետյան
5	Ա$_3$ա	Գզրյան, Գրիգյան, Դավթյան
6	Ա$_4$ա	Աբյան, Աղյան, Ատրունք, Գարյան, Զալյան, Քերյան
7	Ա$_1$ա$_3$ա	Ազատիկյան, Արևիկյան, Դանիելիկյան
8	Ա$_6$ա$_3$ա	Գարուշյան Գեուշյան Գիզուշյան, Ծագուլյան, Սաքուլյան
9	Ա$_3$ա$_4$ա	Բավեյան, Բղդեյան, Բղդոյան, Դավոյան, Զաքեյան, Զաքոյան, Կամոյան
10	Ա$_1$ա$_5$ա	Արշակունյան, Բագրատունյան
11	Ա$_4$ա$_6$ա	Ամատունյան, Պապոմյան
12	Ա$_3$ա$_1$ա	Եսաջանյան, Օհանբեկյան
13	Ա$_1$ա$_1$ա	Գուրգենբեկյան, Հակոբջանյան, Մարիամջանյան, Մինասբեկյան, Մուրադխանյան, Դավիթաղայան, Հակոբքոխվյան
14	Ա$_4$ա$_2$ա	Առնակյան, Բնիկյան, Եզնիկյան, Եղնուկյան, Ըղծակյան
15	Ա$_3$ա$_2$ա	Ախցխեցյան, Գզրարյան, Դատավորյան, Համբարձումյան, Մկրտումյան, Նազանյան, Ներկարարյան, Շատվորյան, Պատվականյան, Տոնականյան, Փոխսրարյան
16	ա$_2$Ա$_4$ա	Անպետյան, Անտաշյան
17	ա$_1$Ա$_1$ա	Բեկ-Հովսեփյան, Գյուլիոհաննիսյան, Կարա-Գևորգյան, Հաջի-Հակոբյան, Մելիք-Ավետիսյան, Միրզա-Ավագյան, Շահմուրադյան, Զիլավազյան, Պարոն-Վարդանյան, Սարըպետրոսյան, Տեր-Դավթյան
18	Ա$_2$Ա$_2$	Աթոռակալյան, Արծաթագործյան, Արծաթպանյան, Գանձապետյան, Ժամագործյան, Ծուխայրյան, Հացագործյան, Հացթուխյան, Սազմանյան, Մաքսապետյան, Չախմախսազյան
19	Ա$_3$Ա$_2$ա	Փայտահատյան, Քարակոփյան, Քարիանյան, Քարտաշյան Գինեգործյան, Կոշկակարյան, Հրայրյան, Հրաչյան
20	Ա$_3$Ա$_3$ա	Մաշկակարյան, Ցրպետյան, Տիրատուրյան
21	Ա$_2$Ա$_3$ա	Ցրբաշյան
22	Ա$_2$ա$_2$ա$_2$ա	Աստվածատրյան, Բարիլուսյան, Խաժակյան, Խաչատրյան
23	ա$_2$Ա$_3$ա$_2$ա	Գալստյան
24	Ա$_6$ա$_3$ա$_1$ա	Անհասկանալյան, Անմեղիկյան
25	Ա$_2$Ա$_3$ա$_3$ա	Գևոջանյան
26	ա$_2$Ա$_2$ա$_2$ա	Աշուղաթոյան, Խոջագորոյան
27	Ա$_3$Ա$_2$ա$_2$ա$_2$ա	Անթեքեյան, Անճարակյան
28	ա$_1$ա	Ցրադացպանյան
29	ա$_1$ա$_1$ա	Բեկյան, Խոջայան Աղազյուլյան, Աղազադյան, Աղախանյան, Աղամելիքյան, Աղամիրյան, Աղավեյան, Աղափիրյան, Ամիրբեկյան, Ամիրջանյան, Բեկջանյան, Խոջաջանյան, Մելիքբեկյան, Մելիքջանյան, Միրզաջանյան, Սարիբեկյան, Վելիջանյան

Ինչպես նշվել է, հայկական ազգանունները կազմվում են ազգանվանակերտ հիմք + ազգանվանակերտ ածանց կաղապարով: Այս դեպքում -յան-ը հանդես է գալիս իբրև ընդհանրական ածանց: Բավական է ասել, որ այսօր հայկական ազգանունների մոտ 96%-ը ձևավորված է այդ ածանցով, և միայն շուրջ 4%-ը՝ այլ ածանցներով: Ածանցազուրկ ազգանունները միայն մի քանիսն են Դանիել-բեկ, Սբով, Քալանթար, Թեչեկ, Քոչար, որոնք կրողների վկայությամբ նախապես հանդես են եկել իբրև կեղծանուններ և ազգանվան ուժ ձեռք են բերել ավելի ուշ, միայն այն ժամանակ, երբ կրողների հետնորդները ժառանգել են դրանք իբրև ազգանուն: Հայկական ազգանուններում –յան-ով ձևերի կողքին հանդիպում են -յանց, -ուճի, -ենց, -ունց, -անց, -ունք ածանցներով ձևավորված դեպքեր, ինչպես նաև ազգանունների մի խումբ, որ կազմված է ազգանվանական հիմք + /-ունի, -ենց, -ունի, -անց, -ով/ + /-յան/ կաղապարով: Ազգանունների այս խմբում առկա է մարդանվանական գործընթացի երկու հաջորդական քայլ:

Իր արգասավորությամբ -յան ածանցին հաջորդում է -յանցը: Նյութի քննությունը ցույց է տալիս, որ –յանց-ով ձևերը գոյատևել և մեզ են հասել գլխավորապես Հայաստանից դուրս ապրող հայերի շնորհիվ: Մեր քարտարանում տեղ են գտել ավելի քան 60 -յանց-ով ձևեր: Կարծում ենք, որ ցուցակը կարող է համալրվել նոր փաստերով, և նման ձևերը կհասնեն լավագույն դեպքում 100-ի: Ավելացնենք նաև, որ մեր ունեցած –յանց-ով գրեթե բոլոր ձևերն ունեն առանց –ց-ի կամ –յան-ով զուգահեռներ՝ Ամատունյանց-Ամատունյան, Ասոյանց-Ասոյան, Արոյանց-Արոյան, Բարաթյանց-Բարաթյան, Բիծյանց-Բիծյան, Գազյանց-Գազյան, Դավիթյանց-Դավիթյան, Դանդուրյանց-Դանդուրյան, Երեմյանց-Երեմյան, Լալայանց-Լալայան, Հակոբյանց-Հակոբյան, Հայրումյանց-Հայրումյան, Հարությունյանց-Հարությունյան, Հունանյանց-Հունանյան, Մախաթյանց-Մախաթյան, Մինասյանց-Մինասյան, Միքայելյանց-Միքայելյան, Տարասյանց-Տարասյան, Տեր-Ղազարյանց-Տեր-Ղազարյան, Պետրոսյանց-Պետրոսյան, Սիրունյանց-Սիրունյան:

Մեր նյութերում առանց –ց-ի կամ –յան-ով իրենց զուգահեռները չունեն հետևյալ ազգանունները Ակուլյանց, Աղայրաղյանց, Էկոյանց, Թոթոմյանց, Չնթլումյանց, Կուտոյանց: Առկա են նաև -ունց, -անց, -ենց, -ոնց ածանցներով կազմություններ: Նշված ազգանվանակերտ ածանցները գրական և բարբառային –ունք, -անք, -եք, -ենք ածանցներով կազմված գոյականների սեռական հոլովածի վերջավորություններն են: Պատկանելություն, սերում ցույց տալու իրենց ունակությամբ այդ հոլովաձևերը գործածության շատ մեծ հաճախականություն են ունեցել առօրյա խոսքում և աստիճանաբար վեր են ածվել անձի անվանման բանաձևի անդամի, իսկ ավելի ուշ Հայաստանի որոշ վայրերում, մասնավորապես Գորիսում և նրա շրջակայքում բարձրացել են ազգանվան աստիճանի: Այսօր էլ Հայաստանի գյուղական վայրերում զգալի տարածում ունեն գերդաստանի նման անունները[2]:

Ինչպես և պետք էր սպասել, մեր ունեցած ավելի քան յոթանասուն դեպքի մեջ գերակշռողը բարբառային –ունց, մնացածը -ոնց, -անց ածանցներն են: Բավական է ասել, որ գրական -ենց ածանցով ունենք նաև Բազենց, Բրուտենց, Խանենց, Մալենց, Սանկասարենց, Սարտենց ձևերը: Օրինակ Աբունց, Սոոնց, Ադունց, Աթասունց, Ակ-

լունց, Սկունց, Սյունց, Բաղունց, Բալունց, Բակունց, Բուլունց, Բոլունց, Բուլանց, Բրզանունց, Գարունց, Գիլունց, Գյազունց, Գոգունց, Դաղունց, Դաջունց, Դայանց, Դինունց, Դիլունց, Դուլունց, Թաթունց, Թելունց, Թոնունց, Թրվանց, Իսունց, Խաչունց, Խեչունց, Խոյլունց, Խոսունց, Խունունց, Ծոնվերանց, Կյազանց, Հախունց, Հյուսունունց, Հովունց, Ղավալբարունց, Գավալբարունց, Ղեյչունց, Ղուդրունց, Մադունց, Մալունց, Մակինց, Մակունց, Մոկնանց, Մոնտունց, Շաշունց, Շեգունց, Շեկունց, Չոպչունց, Ջանունց, Սաթունց, Սակունց, Սենեցունց, Սնունց, Վանդունց, Տոնունց, Քյարունց, Ֆոտունց, Ֆիռունց, Ֆիրունց: Նշված շերտի վերաբերյալ կարելի է ավելացնել նաև այն, որ ազգանվանական հիմքերը մեծ մասամբ կրճատված միավանկեր են, և թերևս հենց այդ պատճառով դժվարությամբ են մեկնաբանվում և ստուգաբանվում[3]:

Ազգանունների այս խմբի մեջ նկատվում են միևնույն հիմքից տարբեր ածանցներով կազմություններ՝ Ադոնց-Ադունց, Մալենց-Մալունց, Մակինց-Մակունց: Մեր նյութերում տեղ են գտել նաև -ոնք և -ունք ածանցներով հետևյալ եզակի օրինակներ՝ Թրոնք, Ատրունք: Վերջիններս ներկայացված են ուղղակի հոլովածևով: Այդ ազգանունների սեռական հոլովածևով տարբերակները մեր քարտարանում բացակայում են:

Հայկական տոհմանվանական ածանցներից միայն –ունի-ով ձևերն են տեղ գտել մեր ազգանունների շարքում /մոտ 40/: Եղածներից ոչ բոլորն են, որ իրենց արմատներով հասնում են մեր ժողովրդի վաղ անցյալին. առանձնացված փաստերի մի մասը որոշակիորեն նորակազմություն է՝ Ակնունի, Աստունի, Ատրունի, Սրամունի, Բենունի, Գերունի, Գոխտունի, Թրունի, Հերունի, Հայկազունի, Հայկունի, Չիտունի, Վարդունի, Քաջունի: Այլ կերպ ասած՝ ազգանունների զանգվածային ձևավորման շրջանում –ունի ածանցը ևս հանդես է բերել որոշ արգասավորություն: –ունի-ով կազմված ազգանունները ձևաբանական առանձնահատկություն ևս ունեն: Ըստ ժամանակակից հայերենի հոլովման օրինաչափության դրանք ենթարկվում են «ու» հոլովման:

Որոշ վերապահությամբ այստեղ դիտարկում ենք նաև կրկնակ մարդանվանական ածանց ունեցող ազգանունները: Ըստ մեր նյութերի՝ հայկական ազգանուններից մոտ հիսունի ազգանվանակերտ –յան ածանցին նախորդում են –ունց, -ենց, -ինց, -ունի, ինչպես նաև փոխառյալ –ով ածանցները: Ազգանունների զանգվածային ձևավորման նախնական փուլում հայերի ազգանունները սերվել են նաև -ով ածանցով, սակայն այդ գործընթացը կարճ կյանք ունեցավ, քանի որ ազգանունների սերման բնիկ հայկական կաղապարները շատ արագ վերջնական քաղաքացիություն ստացան: Այդ ածանցով ձևերը փոխարինվեցին հայկականով, սակայն որոշ դեպքերում, պարզապես եղած փոխառյալ կաղապարի վրա ավելացվեց –յանը՝ Դավիթովյան, Պապովյան, Պապովիչյան, Պրոտոպապովյան[4]:

Կրկնակ ածանցով մյուս ձևերից հատկապես տարածված են –ունց + /-յան/ կաղապարով սերման դեպքերը՝ Ակունցյան, Բադունցյան, Բոլունցյան, Թաթունցյան, Խաչունցյան, Հախունցյան, Հովունցյան, Մազունցյան, Մալունցյան, Մակունցյան, Մանունցյան[5], Վարդունցյան, Վարունցյան: Այս խմբի մյուս ածանցներով կազմությունները ներկայացված են հետևյալ ազգանուններով՝ Մալենցյան, Մալինցյան, Մակինցյան, Մայինցյան, Տատենցյան, Տատինցյան, Խաչենցյան: Օրինակների մեծ մասը

հանդես է գալիս իբրև -ունց-ով ձևերի տարբերակ Մալունցյան-Մալենցյան, Մալինցյան, Մակունցյան, Մակինցյան, Խաչունցյան-Խաչենցյան: Նշենք նաև, որ կրկնակ ածանցներով այս ենթաշերտի ազգանունների մի մասը ներկայացված է իր զուգահեռ առանց –յան-ի ձևերով Ակունցյան-Ակունց, Մալունցյան-Մալունց, Մակունցյան-Մակունց, Թաթունցյան-Թաթունց, Մալենցյան-Մալենց, Մակինցյան-Մակինց: Իսկ -ունի + /-յան/ կաղապարը ներկայացված է հետևյալ ազգանուններով՝ Ամատունյան, նաև՝ Ամատունյանց, Արծրունյան, Արշակունյան, Բագրատունյան, Բզնունյան, Գնթունյան, Գնունյան, նաև՝ Կնունյանց, Խորխորունյան, Մանդակունյան, Ռշտունյան:

Ոչ անձնանուն հիմքերով ազգանունների գերակշռությունն ի հայտ է գալիս ոչ միայն կառուցատիպերի համադրության դեպքում, այլև նյութի վիճակագրության միջոցով, և տարածում գտած այն պատկերացումը, որ հայկական ազգանունը, մեծ մասամբ, հանգում է անձնանվանը, իրավացի է մասնակիորեն: Իրոք, անձնանվանական հիմքերով ազգանունները հեշտությամբ ստուգաբանվում են, հաճախական են, սակայն այդքանը բավական չէ հապճեպ եզրակացությունների հանգելու համար:

Ծանոթագրություններ

1. Տ.Ս. Ավետիսյան, ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը, «Հայոց լեզվի կառուցվածքը», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975:
2. Այս բնագավառում մեր կատարած նախնական հետազոտությունները վկայում են, որ հայկական մարդանունների այս շերտը կազմում է առանձին ենթահամակարգ և կարող է դառնալ հատուկ ուսումնասիրության առարկա:
3. Այդ ազգանունները կրողների հետ զրույցները ևս մեզ բերել են այն համոզման, որ ազգանվանակազմական հիմքերի իմաստները մեծ մասամբ մթագնած են:
4. Չենք քննում Պասկևիչյան ազգանունը, քանի որ այստեղ առկա է անձնանուն՝ Պասկևիչ+յան կաղապարը:
5. Գործ ունենք հնչյունափոխված տարբերակի հետ, որ առաջ է եկել հնչյունական անկման հետևանքով Մանուց-Մանուլյան:

Т. АВЕТИСЯН

СТРУКТУРА АРМЯНСКИХ ФАМИЛИЙ

Статья посвящена исследованию структуры основ армянских фамилий по принципам, разработанным самим автором (см. Т. Аветисян, Структура слова в современном армянском языке. В кн.: Структура армянского языка, Ер., 1970, на арм. яз.). Выявлены, в частности, структурные типы, характеризующие своеобразие армянских фамилий.

T. AVETISYAN

THE STRUCTURE OF ARMENIAN SURNAMES

The article is devoted to the study of the Armenian surnames according to the principles elaborated by the author in one of his previous research. Particularly, the characteristic structural types of the Armenian surnames are defined